

ՄԱՍՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
2008Թ. ՀՈՒՆՎԱՐ-ՀՈԿՏԵՄԲԵՐԻՆ

ԹԻՎ 10

Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում 2008թ. հունվար-հոկտեմբերին

	2008թ.									
	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր
	ճախորդ ամսվա նկատմամբ									
Սպառողական գների ինդեքսը - ընդամենը	102.4	101.1	101.4	101.1	101.3	99.5	97.8	99.3	100.5	100.7
<i>այդ թվում</i>										
Սպառման ապրանքներ	103.2	100.6	101.4	100.5	101.0	99.2	96.7	98.9	100.5	101.0
Պարենային ապրանքներ	104.4	100.6	102.0	100.6	101.0	98.6	95.2	98.4	100.7	101.7
Ոգելից խմիչք, ծխախոտ	99.8	100.1	100.1	100.1	100.2	99.9	100.1	100.0	100.0	100.0
Ոչ պարենային ապրանքներ	100.5	100.5	100.0	100.6	101.3	101.3	100.7	100.4	99.9	99.2
Ծառայություններ	100.2	102.3	101.1	102.6	102.0	100.1	100.4	100.1	100.6	99.8

	2008թ.			
	հոկտեմբեր			հունվար-հոկտեմբեր 2007թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ
	2007թ. դեկտեմբերի նկատմամբ	2007թ. հոկտեմբերի նկատմամբ	2005թ. նկատմամբ	
Սպառողական գների ինդեքսը - ընդամենը	104.9	108.6	117.8	109.6
<i>այդ թվում</i>				
Սպառման ապրանքներ	103.0	107.9	117.0	110.0
Պարենային ապրանքներ	102.9	109.3	121.5	112.5
Ոգելից խմիչք, ծխախոտ	100.2	100.0	100.5	99.9
Ոչ պարենային ապրանքներ	104.4	106.5	109.6	105.8
Ծառայություններ	109.5	110.3	119.7	108.6


Սպառողական գներ. 2008թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ ՀՀ սպառողական շուկայում արձանագրվել է 0.7% գնաճ, ընդ որում, սեպտեմբեր-հոկտեմբերին ընդհանուր գնաճը կազմել է 1.2%: Պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գները 2008թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ աճել են 1.6%-ով, իսկ ոչ պարենային ապրանքների շուկայում և ծառայությունների ոլորտում գրանցվել է գների և սակագների՝ համապատասխանաբար 0.8% և 0.2% գնանկում:

Սպառողական գների ինդեքսը 2008թ. հոկտեմբերին 2007թ. դեկտեմբերի համեմատ կազմել է 104.9%, այդ թվում, պարենային ապրանքներինը (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) 102.7%, ոչ պարենային ապրանքներինը՝ 104.4%, իսկ ծառայությունների սակագներինը՝ 109.5%:

2008թ. հունվար-հոկտեմբերին սպառողական գների միջին ամսական հավելվածը կազմել է 0.5%, ինչը 0.2 տոկոսային կետով գերազանցել է ճախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցված համապատասխան ցուցանիշը (0.3%):

Սպառողական գների հավելվածը 1999-2008թթ. հոկտեմբերին

(ճախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, %)



2008թ. հոկտեմբերին 2007թ. հոկտեմբերի համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 108.6%, այդ թվում պարենային ապրանքներինը (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) 108.3%, ոչ պարենային ապրանքներինը՝ 106.5%, ծառայությունների սակագներինը՝ 110.3%, իսկ հունվար-հոկտեմբերին 2007թ. հունվար-հոկտեմբերի համեմատ՝ համապատասխանաբար 109.6%, 111.2, 105.8 և 108.6%:

Հանրապետությունում դիտարկված 10 քաղաքներում 2008թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ սպառողական գներն աճել են 0.2-1.1%-ով, այդ թվում, գնաճի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Գյումրիում: Մայրաքաղաքում սպառողական գներն աճել են 0.7%-ով, իսկ ք. Մարտունիում պահպանվել է գների ճախորդ ամսվա

մակարդակը:

Պարենային ապրանքների գներ: 2008թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ արձանագրվել է պարենային ապրանքների 1.7% գնաճ, ինչը հիմնականում բանջարեղենի, մրգի, ձկնամթերքի գնաճի արդյունք է: Պարենային ապրանքների շուկայում դիտարկվող 13 ապրանքախմբերից 12-ում նշված ժամանակահատվածում արձանագրվել է 0.1-11.7% գնաճ:

2008թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ հանրապետությունում գրանցվել է բանջարեղենի և կարտոֆիլի 11.7% գնաճ, իսկ 2007թ. հոկտեմբերի համեմատ՝ 3.6% գնանկում: 2008թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ հանրապետությունում արձանագրվել է կանաչ լոբու (7.3%), կարտոֆիլի (19.8%), սմբուկի (21.4%), կաղամբի (24.9%), կանաչ պղպեղի (54.1%), վարունգի (63.0%), լուլիկի (69.3%) գնաճ: Միաժամանակ, ճակնդեղի, գազարի, գլուխ սոխի, սխտորի գները նվազել են 16.9-2.2%-ով: Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում 2008թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ գրանցվել է բանջարեղենի և կարտոֆիլի 2.8-14.9% գնաճ, ընդ որում, գնաճի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Թալինում: Մայրաքաղաքում բանջարեղենի և կարտոֆիլի գներն աճել են 14.6%-ով:

Մրգի ապրանքախմբում 2008թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ արձանագրվել է 6.4% գնաճ, իսկ 2007թ. հոկտեմբերի համեմատ՝ 2.0% գնանկում: 2008թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ հանրապետությունում արձանագրվել է տանձի (8.1%), խաղողի (13.3%), խնձորի (13.6%), դեղձի (21.3%), ինչպես նաև բոստանային մշակաբույսերից ձմերուկի և սեխի՝ համապատասխանաբար 4.2% և 20.8% գնաճ: Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում 2008թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ արձանագրվել է մրգի 0.2-15.8% գնաճ, այդ թվում, գնաճի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Կապանում: Մայրաքաղաքում մրգի գներն աճել են 7.3%-ով:

2008թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ կենդանական և բուսական յուղի գներն աճել են 2.8%-ով, ինչը մեծապես պայմանավորվել է այլ յուղերի (հալած յուղ) 8.2% գնաճով: Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում կենդանական և բուսական յուղի գնաճը կազմել է 0.2-5.1%, այդ թվում, գնաճի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Վաղարշապատում:

Մսամթերքի ապրանքախմբում 2008թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ գրանցվել է 1.1%, իսկ 2007թ. հոկտեմբերի համեմատ՝ 10.0% գնաճ: 2008թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ հանրապետությունում արձանագրվել է հավի բրի և թռչնամսի՝ համապատասխանաբար 0.3% և 4.8% գնաճ: Դրան զուգընթաց, խոզի, տավարի և ոչխարի մսի գները նվազել են 1.7-0.1%-ով: Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում մսամթերքի գներն աճել են 0.3-2.3%-ով, ընդ որում, գնաճի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Վանաձորում: Մայրաքաղաքում մսամթերքի գնաճը կազմել է 0.9%:

Չվի միջին հանրապետական գինը 2008թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ աճել է 1.9%-ով: Հանրապետության դիտարկված 8 քաղաքներում արձանագրվել է ձվի 0.5-11.1% գնաճ, իսկ 3 քաղաքներում պահպանվել է գների նախորդ ամսվա մակարդակը: Մայրաքաղաքում ձվի գնաճը կազմել է 1.3%:

Շաքարավազի միջին հանրապետական գինը 2008թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ աճել է 1.1%-ով: Վաղարշապատ, Երևան և Դիլիջան քաղաքներում նշված ժամանակահատվածում շաքարավազի գինն աճել է 1.5-1.9%-ով, իսկ հանրապետության դիտարկված մյուս 8 քաղաքներում գների մակարդակը նախորդ ամսվա համեմատ մնացել է անփոփոխ:

Հացամթերքի, կաթնամթերքի, ոչ ոգելից խմիչքի, այլ մթերքի, սուրճի, թեյի, կակաոյի գները 2008թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ աճել են 0.1-0.6%-ով: Հրուշակեղենի գները նվազել են 0.1%-ով, իսկ ոգելից խմիչքի և ծխախոտի գների մակարդակը նախորդ ամսվա համեմատ մնացել է անփոփոխ:

Ոչ պարենային ապրանքների գներ: Ոչ պարենային ապրանքների շուկայում 2008թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ գրանցված 0.8% գնանկման վրա իր անմիջական ազդեցությունն է թողել բենզինի և դիզելային վառելիքի՝ համապատասխանաբար 6.1% և 7.5% գնանկումը: Այնուհանդերձ, 2008թ. հոկտեմբերին 2007թ. դեկտեմբերի համեմատ բենզինի և դիզելային վառելիքի գծով արձանագրվել է գնաճ՝ համապատասխանաբար 10.7% և 20.2%-ով, իսկ 2007թ. հոկտեմբերի համեմատ՝ համապատասխանաբար 23.0% և 34.1%-ով:

2008թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ հանրապետությունում գրանցվել է կենցաղային էլեկտրաապրանքների, ոսկերչական ապրանքների, շինանյութերի, մշակույթի ապրանքների 0.3-0.2% գնանկում: Վառելիքի, կահույքի, գորգեղենի, անձնապիտո, գեղահարդարման ապրանքների, տեքստիլեղենի, գրեմական պիտույքների, հագուստի և գործվածքի, կոշիկեղենի գները նշված ժամանակահատվածում աճել են 0.1-1.9%-ով, իսկ խոհանոցային սպասքի, լվացող միջոցների և դեղամիջոցների գների մակարդակը նախորդ ամսվա համեմատ մնացել է անփոփոխ:

Հանրապետության դիտարկված 10 քաղաքներում 2008թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ ոչ պարենային ապրանքների գները նվազել են 3.1-0.3%-ով (գնանկման ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Մարտունիում), իսկ ք. Թալինում գների ընդհանուր մակարդակը նախորդ ամսվա համեմատ մնացել է անփոփոխ: Մայրաքաղաքում ոչ պարենային ապրանքների գները նվազել են 0.7%-ով:


Ծառայությունների սակագներ: 2008թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ հանրապետությունում արձանագրվել է ծառայությունների սակագների 0.2% նվազում, ինչը մեծապես պայմանավորվել է տրանսպորտի ծառայությունների սակագների 2.2% նվազումով (կապված օդային տրանսպորտի ծառայությունների սակագների

7.0% նվազման հետ): Կենցաղային բնույթի ծառայությունների սակագների 0.1% հավելաճը հիմնականում պայմանավորվել է լվացքատան և քիմնաքրման ծառայությունների սակագների 7.6% հավելաճով: Հանրային սննդի, հանգստի կազմակերպման, կրթության համակարգի, մշակույթի ոլորտի ծառայությունների սակագները նշված ժամանակահատվածում աճել են 0.1-1.0%-ով, իսկ բնակարանային, կոմունալ, բուժսպասարկման, կապի, իրավական ու բանկային ծառայությունների սակագները նախորդ ամսվա համեմատ մնացել են անփոփոխ:

2008թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ հանրապետության դիտարկված 5 քաղաքներում գրանցվել է ծառայությունների սակագների 0.4-0.1% նվազում (մայրաքաղաքում սակագները նվազել են 0.4%-ով), 4-ում՝ 0.1-1.1% հավելաճ, իսկ Դիլիջան և Կապան քաղաքներում պահպանվել է սակագների նախորդ ամսվա մակարդակը:

Ըստ գործող մեթոդաբանության, ՀՀ-ում գների դիտարկումը կատարվել է 2008թ. հոկտեմբերի 1-ի, 10-ի և 20-ի մոտակա օրերին երևան քաղաքում և հանրապետության մարզերի 11 բնակավայրերում 470 անվանում ապրանք-ծառայությունների գծով:

ՀՀ սպառողական շուկայում պարենային (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ), ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների փոփոխությունները 2008թ. հունվար-հոկտեմբերին (նախորդ ամսվա նկատմամբ, %)



Արտարժույթային շուկա: 2008թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ հանրապետության սպառողական և արժույթային շուկաներում արձանագրվել է գների և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի (հոկտեմբերի 1-29-ի դրությամբ) համապատասխանաբար 0.7% և 1.2% հավելաճ (ԱՄՆ դոլարն արժեվորվել է): 2008թ. հոկտեմբերին 2007թ. դեկտեմբերի համեմատ սպառողական գների և հաշվարկային փոխարժեքի հավելաճը կազմել է համապատասխանաբար 4.9% և 0.7%: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում սպառողական գների 3.0% հավելաճն ուղեկցվել է հաշվարկային փոխարժեքի 9.4% նվազումով: 2008թ. հոկտեմբերին ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի միջին հաշվարկային փոխարժեքը կազմել է 306.26 դրամ, ինչը 7.3%-ով ցածր է նախորդ տարվա հոկտեմբերի համապատասխան ցուցանիշից (330.28դրամ):

ՀՀ սպառողական գների ինդեքսի, ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի փոփոխությունները 2007-2008թթ. հունվար-հոկտեմբերին (նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, %)

